

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԳՄՍՆ <<ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԴՊՐՈՑ>>ՊՈԱԿ/ԿԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱԿՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՁ
ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ
ԽՍԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ
ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ ՔԱՂԱՔ ՎԱՅՔ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԻՄԱ ՕՅԱՆԵՍՅԱՆ
ՈՒՍՈՒՑԻՉ ՇՈՂԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ԴՊՐՈՑ ԱԶԱՏԵԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ՄԱՐՏՈՒՆԻ 2023

Բովանդակություն

Ներածություն.....	2
Բանավոր հարցում	3
Բանավոր հարցում՝ սովորողների անհատական.....	7
հարցման միջոցով.....	7
Բանավոր հարցում՝ քարտային աշխատանքի միջոցով.....	8
Բանավոր հարցում՝ աշակերտներին ուղղված հարցերի միջոցով.....	10
Բանավոր հարցում՝ բանավոր հաշվի միջոցով	12
Բանավոր հարցում՝ տնային աշխատանքի ստուգման միջոցով.	14
Բանավոր հարցում՝ խաղային տեխնոլոգիաների կիրառմամբ.....	14
Բանավոր հարցում՝ խմբային և համագործակցային աշխատանքների կիրառմամբ.....	15
Եզրակացություն	17
Օգտագործված գրականություն	18

Ներածություն

Սովորողն ազատ և անկաշկանդ է իր ուսումնական գործունեության մեջ:Նա սովորելու ընթացքում կարող է ինքնուրույն ստեղծագործել,արտահայտել իր կարծիքը,անել

տրամաբանական վերլուծություններ, նախաձեռնել և զարգացնել ստեղծագործական ունակությունները:

Շատ մանկավարժներ և հոգեբաններ մեծ ուշադրություն են դարձրել դպրոցում յուրաքանչյուր սովորողի ինքնուրույնության և ստեղծագործական ունակությունների զարգացմանը, որ յուրաքանչյուր աշակերտ կարողանա ազատ շփվի և կիրառի նորագույն տեխնոլոգիաներ:

Տարրական դասարանը համարվում է անհատականության ձևավորման առաջին աստիճանը: Բազմաթիվ մեթոդների ճիշտ կիրառումը ակտիվացնում է աշակերտների մտավոր գործունեությունը, զարգացնում է հիշողությունը և ուշադրությունը, լսելու, ընկալելու ունակությունները:

Կրտսեր դպրոցում տարբեր իրավիճակներում սովորողը դառնում է առավել գործուն և ուշադիր:

Հիմնախնդիրն այն է, որ տարրական դասարաններում ճիշտ ընտրված մեթոդների միջոցով կարելի է լուծել ուսումնական շատ խնդիրներ, որոնց կիրառմամբ կբարձրանա դասի արդյունավետությունը:

Հետազոտության նպատակն է ճիշտ մեթոդների ընտրությամբ և կիրառմամբ դասը դարձնել հետաքրքիր, դասանյութի յուրացումը՝ մատչելի և հասանելի բոլորին: Դասի ճիշտ կազմակերպումն ակտիվացնում է անգամ անհամարձակ երեխաներին, նրանց ներքաշում ուսումնական գործընթացի մեջ: Նույնիսկ դասի վերջում սովորողները առանց կաշկանդվելու արտահայտում են իրենց մտքերը, կարծիք հայտնում, հարցեր տալիս, ներկայացնում սեփական տեսակետները:

Բանավոր հարցում

Ուսումնական գործընթացի կարևոր մաս է կազմում տարրական դպրոցի սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումն ու գնահատումը:

Մաթեմատիկայի ուսուցման ծրագիրը նպաստում է երեխաների մտավոր զարգացման գործընթացին:

Տարրական դասարանների մաթեմատիկայի ուսումնական նյութի կայուն յուրացումը պայմանավորված է ուսուցման նոր տեխնոլոգիաների ներդրման արդյունավետությամբ:

<<Մաթեմատիկա>> առարկայի չափորոշային և ծրագրային կարևոր պահանջներից է աշակերտների տրամաբանական, ստեղծագործական մտածողության զարգացնելը:

Մաթեմատիկայում շեշտը պետք է դնել մաթեմատիկական մտածողության զարգացման վրա: Այսինքն՝ հարցերը պետք է լինեն այնպիսին,

որ աշակերտներին մղեն վերլուծելու, համադրելու, հիմնավորելու, առաջքաշելու վարկածներ: Ուսուցիչը պետք է առաջադրի այնպիսի հարցեր, որ աշակերտները դրանց պատասխանելու համար փնտրեն և գտնեն լուծման տարբեր ճանապարհներ: Դրան հասնելու համար օգտվում եմիավորային գնահատման տեսակներից՝ բանավոր հարցումից, որի ժամանակ աշակերտը բանավոր խոսքով ներկայացնում է յուրացրած ուսումնական նյութը՝ դրսևորելով ձեռք բերած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները:

Բանավոր հարցումն ունի մի քանի նպատակ՝

ա) նպաստում է սովորողների մտածողության, դիտողականության, ուշա-

դրության զարգացմանը, արագ և ճիշտ կողմնորոշվելուն, ինչպես նաև մարզում է հիշողությունը

բ) օգնում է յուրացնել տեսական շատ հարցեր

գ) զարգացնում է բանավոր խոսքը, հղկում մաթեմատիկական լեզուն.

աշակերտները կարողանում են հստակ և հակիրճ ձևակերպել մրտ-
քերը, բանավոր խոսքում օգտագործել մաթեմատիկական հասկացու-
թյունները

դ) հնարավորություն է տալիս աշակերտներին արտահայտելու, ճշգրտե-

լու իր իմացածը՝ հետագայում այն անսխալ ձևով գրավոր աշխա-

տանքում կիրառելու համար

ե) ձևավորում է լսելու կարողություն:

Բանավոր հարցման միջոցով պարզաբանվում են սովորողների ձեռքբերումները՝

- մաթեմատիկական գիտելիքների յուրացումը,
- մաթեմատիկական խոսքը,
- լեզվամտածողությունը,
- վերարտադրման կարողությունները,
- տրամաբանությունը,
- կռահելու ունակության զարգացումը ,
- ստեղծագործական կարողությունները

Բանավոր հարցումը կարելի է անցկացնել դասի տարբեր փուլերում:

Բանավոր հարցման ժամանակ դասարանում պետք է ստեղծել բարենպաստ միջավայր՝ ապահովելով աշակերտների ակտիվ մասնակ-

ցությունը: Միջավայր, որտեղ աշակերտը կարողանա հանգիստ արտա-

հայտել իր մտքերը: Այդ դեպքում աշակերտները հնարավորություն կու-

նենան ուշադիր լսել միմյանց սովորել իրարից :

Բանավոր հարցման միջոցով ուսուցիչը ստուգում է, թե աշակերտները ինչպես են յուրացրել նյութը , ինչպիսի կարողություններ և հմտություններ ունեն :

Բանավոր հաշիվը (5 – 7ր) հարմար է կազմակերպել նոր նյութի հաղորդումից առաջ: Այն հետապնդում է կրկնելու, ամրապնդելու և նոր նյութի հաղորդումը նախապատրաստելու նպատակով:

Հարցերից մի քանիսը պետք է այնպիսին լինեն, որ դասարանի աշա-

կերտների մեծ մասը կարողանա պատասխանել: Տրվում են նաև հար-
ցեր, որոնց պատասխանելու համար անհրաժեշտ է ուսուցչի միջամտու-
թյունը: Բանավոր հաշվի ժամանակ պետք է առաջադրվի այնպիսի հարց,որը կստեղծի
պրոբլեմային իրավիճակ:

Օրինակ՝

4-րդ դասարան

Չաշվի՛ր բանավոր հեշտ եղանակով՝

$$7 + 7 + 7 + 7 + 7 + 6 + 6 + 6 + 6 + 6 = ?$$

Կամ

$$9 \cdot 9 \cdot 9 \cdot 9 \cdot 0 \cdot 1 \cdot 1 \cdot 1 \cdot 1 = ?$$

<<Մաթեմատիկա>> առարկայից մեկ կիսամյակում բանավոր հար-
ցումների նվազագույն քանակը պետք է լինի շաբաթական ժամաքա-
նակին հավասար:

Մաթեմատիկայից բանավոր հարցումը իրականացվում է հետևյալ
ձևով.

1. Առանձին աշակերտների բանավոր հարցում :
2. Քարտային աշխատանքներ:
3. Աշակերտներին ուղղված հարցեր:
4. Բանավոր հաշիվ:
5. Տնային աշխատանքի ստուգում:
6. Խաղային տեխնոլոգիաների կիրառում:
7. Խմբային եւ համագործակցային աշխատանք:

հարցման միջոցով

Ուսուցիչը դասի ընթացքում անհատական բանավոր հարցման միջոցով պարբերաբար ստուգում է աշակերտների գիտելիքները, կարողություններն ու հմտությունները և գնահատում: Ինչը նրան հնարավորություն է տալիս պարզելու, թե աշակերտները ինչպես են յուրացրել նյութը, ինչպիսի դժվարություններ ունեն: Այս ստացած տեղեկությունները վերլուծելով՝ քայլեր է մշակում տեղ գտած թերությունները վերացնելու համար:

Դրանով ուսուցիչը նաև պարզում է, թե ինքն ինչ հաջողությամբ է աշխատել, որքանով են ճիշտ այն մեթոդական հնարները, որոնք նա կիրառում է: Ելնելով ստուգման արդյունքներից՝ ուսուցիչը կարող է անհրաժեշտ փոփոխություն մտցնել իր աշխատանքում:

Օրինակներ բազմապատկման կամ բաժանման աղյուսակներից, բազմանիշ թվերի համեմատումից, թվերը ներկայացնել կարգային գումարելիների գումարի տեսքով և այլ թեմաներից.

6•7 56:7

8•4 49:7

6•9 81:9

9•5 72:8

Համեմատել՝

478 եւ 487

901 եւ 910

Թվերը ներկայացնել կգգ տեսքով՝

87205=

2636=

Բանավոր հարցում՝ քարտային աշխատանքի միջոցով

Բանավոր հարցում կարելի է կազմակերպել նաեւ քարտային աշխատանքի միջոցով: Ուսուցիչն այն աշակերտներին, որոնց ցանկանում է առանձին գնահատել, տալիս է քատեր: Նրանց տրվում է մի քանի րոպե ժամանակ՝ մտածելու, ապա բանավոր պատասխանելու համար:

Քարտային աշխատանքի հիմնական նպատակն է ստուգել տվյալ թեմայից աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակը: Երեքից – չորս առաջադրանքների միջոցով

ուսուցիչը հնարավորություն կունենա ստուգելու տվյալ թեմայից աշակերտների յուրացման աստիճանը:

Օրինակներ՝

3-րդ դասարան

Թեման՝ Քառանկիչ թվեր:

Քարտ 1

1. Գտի՛ր այն թիվը, որը պարունակում է .

ա) 2 հազարյակ, 8 հարյուրյակ, 5 տասնյակ և 7 միավոր

բ) 7 հազարյակ, 7 տասնյակ, 7 միավոր

գ) նշի՛ր հազարավորների դասի 6 միավոր

Քարտ 2

4708 թիվը ներկայացրու կարգային գումարելիների գումարի տեսքով:

4708=

Քարտ 3

2463 թվի գրառման մեջ ո՞ր նիշն է արտահայտում առավել մեծ թիվ , որը՝ փոքր թիվ:

Քարտ 4

Ճի՞շտ է արդյոք , որ յուրաքանչյուր քառանկի թիվ մեծ է ցանկացած միանկի , երկնիշ և եռանկի թվից: Պատասխանը հիմնավորի՛ր:

4-րդ դասարան

Թեման՝ Պարզ խնդիրների ամբողջի մասը և ամբողջը իր մասով
գտնելու վերաբերյալ

Քարտ 5

Գտի՛ր .

ա) 1կգ -ի $\frac{1}{10}$ մասը

բ) 18 ժ -ի $\frac{1}{3}$ մասը

գ) 480 կմ – ի $\frac{1}{16}$ մասը

դ) 1 մ – ի $\frac{1}{5}$ մասը

Քարտ 6

Անևան գնել էր 800 գ կարագ: Նա թխվածքի համար օգտագործեց այդ կարագի $\frac{1}{5}$ մասը: Որքա՞ն կարագ նա օգտագործեց թխվածքի համար:

Քարտ 7

Ավտոմեքենան պետք է անցներ 240 կմ ճանապարհ :

Ճանապարհի 1/3 մասն անցնելուց հետո քանի՞ կիլոմետր կմնա նրան դեռ անցնելու:

Քարտ 8

Սոնան ունի 30 մատիտ: Նա 1/6 մասը նվիրեց քրոջը: Քանի՞ մատիտ մնաց Սոնայի մոտ:

Բանավոր հարցում՝ աշակերտներին ուղղված հարցերի միջոցով.

Բանավոր հարցում կարելի է կազմակերպել նաև հարցերի միջոցով: Այդ հարցերը բացահայտում են աշակերտների կողմից նյութի յուրացման խորությունն ու կայունությունը: Հարցադրումների միջոցով ուսուցիչը կարող է ոչ միայն ստուգել աշակերտի գիտելիքները, կարողությունները և գնահատել, այլ նաև պարզել, թե որ հարցում է նա դժվարանում, և քայլեր ձեռնարկել նկատված թերությունները վերացնելու համար:




Ուսուցչի հարցադրումները պետք է լինեն հստակ ձևակերպված՝ ակնկալելով ճիշտ, հստակ պատասխաններ: Հաճախ պետք է տրվեն այնպիսի հարցեր, որոնք պահանջում են բացատրություններ: Յուրաքանչյուր հարցադրում պահանջում է պատասխան և հետապնդում է տարբեր նպատակներ:

Հարցադրումները պետք է լինեն թե՛ պարզ, և թե՛ բարդ: Հարցերը պետք է տրվեն պարզից բարդ սկզբունքով:

Պարզ հարցերը տրվում են աշակերտներին ակտիվացնելու, ամբողջ դասարանը ընդգրկելու նպատակով:

Օրինակ՝

Քանի՞ կողմ և գագաթ ունեն եռանկյունը , քառանկյունը , բազմանկյունը:



Ի տարբերություն պարզ հարցերի , բարդ հարցերը տրամաբանել և հիմնավորումներ են պահանջում:

Օրինակ՝

4-րդ դասարան

Գրի՛ր որևէ թիվ: Այդ թվին գումարի՛ր 15 և ստացված գումարը բազմապատկի՛ր 10-ով: Արդյունքից հանի՛ր 150:

(Լուծում՝

$$(10 + 15) \cdot 10 - 150 = 250 - 150 = 100$$

Պատասխան՝ 100)

Մաթեմատիկայում շեշտը պետք է դնել մաթեմատիկական մտածողության վրա , այսինքն՝ հարցերը պետք է լինեն այնպիսին , որ աշակերտին պետք է մղեն վերլուծելու , համադրելու և հիմնավորելու : Աշակերտները պետք է փնտրեն , գտնեն լուծման տարբեր ճանապարհներ:

Օրինակ՝

Ի՞նչ եղանակով է հնարավոր գտնել 25 և 9 թվերի արտադրյալը :

(Լուծում՝

$$25 \cdot 9 = (20 + 5) \cdot 9$$

$$25 \cdot 9 = (25 \cdot 10) - 25$$

Կամ Հաշվի՛ր 7+8+9+10+11+12+13 թվերի գումարը հաշվի՛ր հարմար եղանակով:

Լուծում՝

$$(7+3)+(8+12)+(9+11)+10)$$

Բանավոր հարցման ժամանակ կարևոր են սաև աշակերտների հարցադրումները, որոնք նպաստում են երեխաների խոսքի զարգացմանը և հարցերի ճիշտ ձևակերպմանը: Իրենց կողմից առաջադրվող հարցերի միջոցով նրանք դառնում են ավելի նախաձեռնող և կարողանում են ճիշտ մոտենալ խնդրի լուծմանը: Որքան աշակերտը բանիմաց ու գրագետ է , այնքան նրա կողմից առաջադրված հարցերը ճիշտ նպատակին են ծառայում: Եթե հարցադրումների ձևակերպումների մեջ նկատվում են թերություններ , ապա ուսուցիչը պետք է շտկի, սովորեցնի ճիշտ և հստակ ձևակերպել հարցը:

Բանավոր հարցում՝ բանավոր հաշվի միջոցով

Բանավոր հարցման մեջ ընդգրկված առաջադրանքները պետք է համապատասխանեն թեմային , դասի նպատակին և նպաստեն սաև անցած նյութի կրկնությանը , ինչպես սաև չպետք է լինի հոգնեցուցիչ :

Բանավոր հաշվի ժամանակ առաջադրվող խնդիրները պետք է լինեն այնպիսին , որ աշակերտները կարողանան հիշել թվային տվյալները:Բանավոր հարցման ժամանակ ուսուցիչն ուշադրության կենտրոնում է պահում այն աշակերտներին , որոնց պլանավորել է գնահատել:

Առաջադրված հարցերին աշակերտները կարող են պատասխանել բանավոր կամ թվաքարտերով: Այդ ձևով ուսուցիչն անմիջապես տեսնում է սխալը , և նույնը պահանջում է բարձրաձայն կատարել:

Օրինակ՝

3-րդ դասարան

Թեման՝ Եռանկիչ թվեր: Գործողություններ դրանց հետ:

1. Գտի՛ր 600 և 50 թվերի տարբերությունը :

2. Գտի՛ր 260 և 30 թվերի գումարը:

3. 930-ը փոքրացրու՝ 900-ով:

4. 220-ը փոքրացրու՝ 2անգամ:

5. 360-ը մեծացրու՝ 40-ով:

6. 120-ը մեծացրու՝ 4անգամ

7. Զանիսով է 280-ը մեծ 140-ից:

4- րդ դասարան

Թեման՝Թվի ներկայացումը կարգային գումարելիների գումարի տեսքով:

1.Յուրաքանչյուր կարգում քանի միավոր կա՝

67 , 308 , 4552

2.Որքանով կմեծանա 34581 թիվը , եթե նրա գրության հիևգերորդ կարգում

Գրված թվանշանը փոխարինենք 8-ով:

3.Ասա՝ յուրաքանչյուր թվի նախորդ և հաջորդ կլոր հազարյակները՝

(.....,4200,.....3800....6450....)

4.Ասա՝ այն թիվը,որը կազմված է 2հազարյակից,4հարյուրյակից և 2միավորից:

5.Ասա՝ գումարը՝

60000+2000+520+5 7հազ. +3հ. +42մ.

Բանավոր հարցում՝ տնային աշխատանքի ստուգման միջոցով.

Հաճախ բանավոր հարցումը ծառայում է որպես տնային առաջադրանքների ստուգման միջոց: Աշակերտները փակում են տետրերը և բաց դասագրքի օգնությամբ ներկայացնում և վերլուծում են իրենց կատարած տնային աշխատանքը: Դրա առավելությունն այն է ,որ ուսուցիչը համոզվում է , որ աշակերտն ինքնուրույն է կատարել տնային աշխատանքը: Գնահատման նպատակով ուսուցիչը և աշակերտները լրացուցիչ հարցեր են տալիս թեմայի վերաբերյալ:

Բանավոր հարցում՝ խաղային տեխնոլոգիաների կիրառմամբ

Բանավոր հարցման կազմակերպման գործում լավագույն միջոց է համարվում խաղը, որովհետև այդ ժամանակ ամենաթույլ աշակերտն անգամ ոգևորվում է, դառնում է անկաշկանդ: Ուսուցիչը խաղի ընթացքում նորից ուշադրության կենտրոնում է պահում այն երեխաներին ,որոնց ցանկանում է գնահատել:

Օրինակ՝ <<Թվաբանական սանդուղք>>,<<Մոզական քառակուսիներ>>,<<Շրջանաձև օրինակներ>>,<<Թվաբանական դոմինո>> և այլն:

Եթե գնահատման նպատակով ուսուցիչը ցանկանում է ստուգել երկնիշ, եռանիշ թվերի հետ կատարվող գործողությունները (+, - , : , •), ապա կազմակերպում է <<Շրջանաձև օրինակներ >> խաղը , որի ժամանակ կազմվում են շրթայաձև օրինակներ:

Օրինակ՝

3-րդ դասարան	4-րդ դասարան
80-8•9	47+25•10
8•3+7	720:9+1
31-9•3	81-3•7
4•9-29	60:6-5
7•8-50	5•8-30

Խաղավարն ուշադիր հետևում է խաղի ընթացքին: Սխալ պատասխանի դեպքում դիմում է աշակերտների օգնությանը և ուղղում սխալները:

Բանավոր հարցում՝ խմբային և համագործակցային աշխատանքների կիրառմամբ.

Խմբային և համագործակցային աշխատանքների կիրառմամբ բանավոր հարցումների անցկացումը հետապնդում է աշակերտների հաղորդակցական և Համագործակցային կարողությունները զարգացնելու նպատակ:

Օրինակ՝

3-րդ դասարան

Թեման՝ Խնդիրների լուծում երկրաչափական պատկերների միջոցով.

Նպատակը՝ Աշակերտի տրամաբանական մտածողության զարգացում:

Ընթացքը՝ 1. Աշակերտներին բաժանել խմբերի.

2. Յուրաքանչյուր խմբի տրվում է առաջադրանքներով քարտը.

3. Աշխատանքի համար տրվում է 5-7 րոպե.

4. Խմբերին առաջարկվում է աշխատել համատեղ և գտնել խնդրի լուծումը.

5. Ուսուցիչը յուրաքանչյուր խմբից ընտրում է որևէ աշակերտ, ով պետք է ներկայացնի իրենց խմբի աշխատանքը:

Ներկայացուցչի պատասխանից երևում է, թե որքանով է լավ աշխատել իր խումբը: Պատասխանող աշակերտի միավորային գնահատականը տրվում է խմբի մյուս անդամներին:

Քարտ- առաջադրանք

1.Քանի՞ քառակուսի եք տեսնում նկարում:

Խմբային և համագործակցային աշխատանքների կատարման ժամանակ, իրար օգնելով ու քննարկելով աշակերտները ավելի շուտ են գտնում խնդրի ճիշտ լուծումը:

Համագործակցային այս աշխատանքի միավորային գնահատումը կարելի է իրականացնել հետևյալ կերպ. Խմբի աշխատանքը ներկայացնող աշակերտի գնահատականը տարածել խմբի յուրաքանչյուր անդամի վրա:

Եզրակացություն

Այսպիսով՝ դասավանդման ընթացքում ճիշտ տեխնոլոգիաների կիրառմամբ գիտելիքներն ավելի հեշտ ու արդյունավետ են յուրացվում: Դրանց ճիշտ կազմակերպումը կօգնի իրականացնել չափորոշչային և ծրագրային պահանջները, կդարձնեն ուսուցման գործընթացն ավելի հետաքրքիր ու արդյունավետ: Սովորողները ձեռք են բերում ինքնավստահություն սեփական ուժերի նկատմամբ, վարժվում են համատեղ գործունեության՝ համագործակցության;

Հետևաբար՝ բանավոր հարցումը կարելի է կազմակերպել ոչ միօրինակ, այլ բազմազան ձևերով: Բանավոր հարցումների ճիշտ կազմակերպումը կօգնի իրականացնել չափորոշչային և ծրագրային պահանջները, մաթեմատիկայի ուսուցման գործընթացը կդարձնի ավելի հետաքրքիր ու արդյունավետ:

Սովորողը բանավոր հաշվի ժամանակ պետք է կարողանա իր սեփական մտքերը հստակ ձևակերպել, ուրիշի մտքերը հասկանալ ու կարևորել, տրամաբանված դատողություններ անել, տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվել, հարցեր ձևակերպել:

Բանավոր հաշվի միջոցով ուսուցիչը հնարավորություն է ստանում պարզել աշակերտների գիտելիքների յուրացման աստիճանը:

Բանավոր հարցումը կատարվում է ուսուցիչ – դասարան, ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-դասարան, աշակերտ-աշակերտ շփումներում:

Բանավոր հարցումը ուսուցիչն այնպես պետք է կազմակերպի, որ աշակերտները պասիվ ունկնդիրներ չլինեն, այլ ակտիվ, գործուն մասնակիցներ:

Բանավոր հաշիվը հանգեցնում է դասավանդման ընթացքում առաջացած թերությունների շտկմանը: Այդ պատճառով հարմար է նախա- տեսել կարճ ժամանակի առաջադրանքներ, որոնց նախատեսված է հատկացնել 5-7 րոպե:

Այսպիսով, ուսուցիչը պետք է նոր գաղափարների և մոտեցումների կրողը լինի:
Միայն ստեղծագործական մոտեցմամբ, նորանոր ձեռքբերումների շնորհիվ է հնարավոր
հասնել բարձր արդյունքների:

Օգտագործված գրականություն



1. 1.Նախաշավիղ 3-4 (2002)
- 2.Մաթեմատիկան դպրոցում 5(2011)